ՀԱՅՑՈՐԴ՝ ՀԵԼԵՆ Ղ. ԱԶԱՐՅԱՆԻ

“ԿԱՆԱՆՑ ԴԵՄՔԻ ՄԱՇԿԻ ԼՈՒՍԱԾԵՐԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՀԵՏԱՃԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՇՏԿՈՒՄԸ” ԹԵՄԱՅՈՎ ԺԴ. 00.03 “ՆԵՐՔԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ” ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ Բ.Գ.Թ. ԴՈՑԵՆՏ ԳՐԻԳՈՐ ԱԼԲԵՐՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԵՊԲՀ մաշկաբանության և սեռավարակաբանության ամբիոնի հայցորդ Հելեն Ղազարի Ազարյանի աշխատանքը նվիրված է լուսաածերացման II և III աստիճանի հատկանիշներով պայմանավորված 30-40 տարեկան կանանց դեմքի մաշկի հետաճական կառուցվածքագործառութային փոփոխություններին, նրանց բուժման տարբեր մեթոդների համեմատական ազդեցության և արդյունավետության ուսումնասիրությանը և այդպիսով լուսաածերացման ախտանիշներով կանանց բուժման մարտավարության բարելավմանը ու ռացիոնալիզացիային:

Հայրենական և արտասահմանյան գրականության տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ այսօր առկա են մաշկի լուսաածերացմանը (ՄԼԾ) նպաստող բազմաթիվ արտաքին և ներքին գործոններ, ինչպիսիքեն օրինակ անդրամանուշակագույն ճառագայները, մաշկի անբավարար խնամքը, ալկոհոլիզմը, նիկոտինիզմը, էնդոկրին և իմունաբանական խնդիրները, հոգեկան ախտաբանությունը և այլն:

ՄԼԾ-ը դրսևորվում է դեմքի մաշկի դեղնավուն նրբերանգավորումներով, դիսպիգմենտացիոն բնույթի բծերի առաջացումով, դինամիկական և ստատիկական կնճիռների արտահայտվածությամբ, մաշկի կոպտացումով և բարակացմամբ, գերեղջերացմամբ և այլն: Վերոնշյալ փոփոխությունները երիտասարդ կանանց համար դառնում են դրամատիկ և հանգեցնում են կյանքի որակի նշանակալի անկման:

Ժամանակակից գրականության մեջ նկարագրված են ՄԼԾ-ի հետազոտման բազմաթիվ մեթոդներ՝ վիդեոսկոպիա, կորնեոմետրիա, վապոմետրիա, կուտոմետրիա, սեբոմետրիա և այլն, և մաշկի տարիքային խախտումների շտկման ներերակային միջամտություններ (բիոռեվիտալիզացիա, բիոռեպարացիա, մաշկաբանական պիլինգներ և այլն):

Չնայած բնագավառի նկատելի առաջնթացին, ախտորոշիչ մեթոդները սուբյեկտիվ են, ապացուցողականից դուրս, հնամենի: Ախտաձևաբանական մեթոդը հազվադեպ է կիրառվում:

Հիվանդների սպասելիքների և բավարարվածության աստիճանի բարձրացման նպատակով ախտորոշման, բուժման և կանխարգելման մեթոդները շարունակում են կատարելագործվել: Մշակվում են նոր, օբյեկտիվ, բուժման առավել ֆիզիոլոգիկան, ախտածագումնաբանորեն հիմնավորված մեթոդներ:Վերոնշյալը հաստատում է Հելեն Ազարյանի թեկնածուական թեզի զգալի այժմեականությունը:

Հետազոտության նպատակն է հանդիսանում կանանց դեմքի II և III աստիճանի լուսածերացմամբ մաշկի մորֆոֆունկցիոնալ վիճակն արտացոլող դեգեներատիվ փոփոխությունների օբյեկտիվ ուսումնասիրությունը, բուժման տարբեր մեթոդների համեմատական արդյունավետության գնահատումը և բարելավումը:

Նպատակի իրագործման համար հեղինակի կողմից դրվել է 5 խնդիր, որոնց որոշումը համապատասխանում է դիսերտացիոն աշխատանքում դրված նպատակին:

Ատենախոսությունը շարադրված է հայերեն լեզվով համակարգչային տեքստի 145 էջերում, բաղկացած է ներածությունից, գրականության վերլուծությունից, հետազոտության նյութի և մեթոդների նկարագրությունից, սեփական հետազոտությունների արդյունքներից, ամփոփումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, հապավումների ցանկից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից (156 աղբյուր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով):

Աշխատանքը պատկերազարդված է 16 աղյուսակների և 22 նկարների միջոցով:

Հեղինակի հրատարակած աշխատություններում հետազոտման արդյունքների ընդգրկման լիարժեքությունը

Ատենախոսության թեմայով հայրենական և արտասահմանյան մամուլում հրատարակվել է 6 գիտական աշխատանք՝ 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 4 հոդված, որոնցից 2-ն առանց համահեղինակների, և 1 թեզիս: Դրանցում լիարժեք ներկայացված են Հելեն Ղազարի Ազարյանի ատենախոսական հետազոտության արդյունքները: Հոդվածների նյութերի հավաքագրումը, մշակումը, վերլուծությունը, եզրակացություններն անձամբ հայցորդի գիտական աշխատանքի արդյունքն են:

Ատենախոսության առաջին գլխում՝ գրականության տեսություն ներկայացվել են հայրենական և արտասահմանյան գրականության ուսումնասիրությունները, որոնք նվիրված են հետազոտվող հիմնախնդրի մի շարք ասպեկտներին: Մանրակրկտորեն նկարագրված է ՄԼԾ-ան բնութագիրը, առաջացման պատճառները, զարգացման փուլերը, հետազոտման մեթոդները, ինչպես նաև մաշկի տարիքային խախտումների շտկման մեթոդները:

Երկրորդ գլխում՝ հետազոտության նյութը և մեթոդները ներկայացվում է լուսաճերացման հատկանիշներով Հելիոս ԲԿ (ԵրՊԲՀ մաշկաբանության և սերավարակաբանության ամբիոնի կլինիկական բազա) դիմած 234 կնոջ հետազոտման և իրականացված բուժման ընթացքը: Հետազոտվող կանայք բաժանվել են 2 խմբի՝ I խումբ (II աստիճանի լուսաճերացման հատկանիշներով 114 կին), II խումբ (III աստիճանի լուսաճերացման հատկանիշներով 120 կին):

Երեքշաբաթյա ընդմիջումներով կատարվել է 3 միկրոներարկում (համապատասխանաբար՝ ՄՀ-ի (մոդ. հիալուրոնաթթու), ԹՀՇ-ի (թրոմբոցիտներով հարուստ շիճուկ) և ՄՀ-ԹՀՇ համալիրի (մոդ. հիալուրոնաթթու և թրոմբոցիտներով հարուստ շիճուկ):

«Դերմա Լաբ Կոմբո» կոչվող սարքավորման միջոցով («DermaLab® COMBO SkinLab» կոմբայն, Գերմանիա) ուսումնասիրվել է II և III ԱԼԿԴՄ (աստիճանի լուսաճերացմամբ կանանց դեմքի մաշկի) մորֆոֆունկցիոնալ փոփոխությունները՝ բուժումից առաջ և հետո:

II և III ԱԼԿԴՄ ձևաբանական փոփոխությունները ուսումնասիրվել է գերձայնային հետազոտությամբ:

Երրորդ գլխում՝ սեփական հետազոտությունների արդյունքները և դրանց վերլուծությունը մանրամասն նկարագրված է երկրորդ և երրորդ աստիճանի լուսաճերացմամբ կանանց դեմքի ֆունկցիառնալ, տեղագրական և ձևաբանական փոփոխությունները բուժումից առաջ և հետո:

Սեփական հետազոտությունները ներկայացված նյութերում արտացոլված են կատարված աշխատանքի արդյունքները և նրանց համապատասխանությունը առաջադրված խնդիրներին:

Ամփոփում բաժնում հեղինակը սեղմ տարբերակով ներկայացնում է աշխատանքի հիմնական դրույթները, որոնք թույլ են տալիս պատկերացնել ատենախոսության իմաստը, և ներդրված մեթոդների կիրառման արդյունավետությունը կատարված կլինիկական հետազոտություններում:

Եզրակացությունները հիմնավորված են և արտացոլում են ատենախոսության դրույթները, որոնք հրապարակված են գիտական հոդվածներում և ելույթներում:

Հետազոտության արդյունքները և գործնական առաջարկները կգտնեն լայն կիրառում կոսմետոլոգիայի բնագավառում, որը մեր կարծիքով, դրական կանդրադառնա II և III աստիճանի լուսաճերացմամբ տառապող կանաց բուժման արդյունավետության, ինչպես նաև կյանքի որակի վրա:

Աշխատանքը շարադրված է գրագետ լեզվով, կարդացվում է հեշտ և մեծ հետաքրքրությամբ, ցուցադրական նյութը ունի բարձր որակ, իսկ ներկայացված նյութը՝ զգալի գիտական և գործնական արժեք:

Ատենախոսական աշխատանքներին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացված պահանջները հաշվի առնելով, հարկ ենք համարում նշել մի փոքր դիտողություն.

1. Ատենախոսության մեջ առկա են վրիպակներ

Սակայն նշված դիտողությունները չունեն սկզբունքային նշանակություն և չեն իջեցնում գրախոսվող աշխատանքի արժեքը:

ԺԴ.00.03 "Ներքին հիվանդություններ" մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման "Կանանց դեմքի մաշկի լուսաձերացման մորֆոֆունկցիոնալ դեգեներատիվ փոփոխությունները և նրանց շտկումը" թեմայով ատենախոսական աշխատանքը համարվում է ավարտված գիտական հետազոտություն, նրա արդյունքները ունեն զգալի տեսական և գիտական նշանակություն և համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների համար ներկայացված պահանջներին, իսկ նրա հեղինակը արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊԲՀ մաշկաբանության և ՍՎ
ամբիոնի դոցենտ Գ.Ա. Հարությունյան

ԵՊԲՀ մաշկաբանության և ՍՎ
ամբիոնի դոցենտ Գ.Ա. Հարությունյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊԲՀ գիտական քարտուղար, բ.գ.դ.
պրոֆ. Տ. Գ. Ավագյան

01.06.2022թ